ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/22

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝

Մ. Ավետիսյանի (լիազորագիր, տրված՝ 07.05.2019թ.)

քննելով «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 10.05.2019թ. ներկայացված և 13.05.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/22 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Արֆարմացիա» ՓԲԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 10.05.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019թ. սպրիլի 16-ի N 01 որոշմամբ հրավեր է ներկայացվել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» դեղորայքի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման հրավերի վերաբերյալ (այսուհետ՝ Հրավեր):

Վերոնշյալ գնման հրավերի 1.1 կետով սահմանված գնման առարկայի թիվ 2, 4, 6, 7, 9, 10, 13, 14, 15, 16, 17, 18, 22, 23-րդ չափաբաժիններում ընդգրկված ապրանքների գնանշման հարցման հրավերին մասնակցության համար հայտ է ներկայացրել նաև «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2019 թվականի գրությամբ հայտնվել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով դեղորայքի ձեռքբերման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 4-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով «Արֆարմացիա» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Ուստի առաջարկվել է սահմանված կարգով գնումները համակարգող Դ. Գասպարյանին ներկայացնել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը՝ պայմանագիր կնքելու նպատակով, կամ հայտնել ընկերության կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները:

Այնուհետև 07.05.2019 թվականին «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ստացվել է ևս մեկ գրություն, որով հայտնվել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով դեղորայքի ձեռքբերման նպատակով իրականացվող գնման

ընթացակարգի շրջանակներում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, որը համարվում է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ և ղեկավարելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով՝ Ընկերության կողմից ներկայացրած հայտը մերժվում է:

Ընկերությունը գտնում է, որ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար՝«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերի հանձնաժողովի 07.05.2019 թվականի որոշումն՝ ներկայացրած հայտը մերժելու վերաբերյալ անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.

1. «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2019 թվականի գրությամբ հայտնվել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով դեղորայքի ձեռքբերման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 4-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով «Արֆարմացիա» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

2. «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմի 07.05.2019 թվականի գրություն համաձայն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, որը համարվում է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ:

Վերոշարադրյալի կապակցությամբ Ընկերությունը փաստել է, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հարկային պարտավորությունը, որը ըստ էության հանդիսանում է դրոշմանիշային վճար, որը համաձայն ՀՀ Գնումներ հետ կապված բողոքներ քննող անձի 05.11.2018

թվականի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/87 որոշման դիտարկվում է որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Հետևապես «Արֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը մերժելու հիմքում չի կարող դրվել այն հանգամանքը, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական և իրավական հիմնավորումները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով՝ Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հանձնաժողովին «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հայտը մերժելու որոշումը անվավեր ճանաչելու (վերացնելու) և որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից հրավերի 4-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժիններով «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ի լրումն բողոքի Ընկերությունը 31.05.2019թ. ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի մոտ 24 000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքը ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող

եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից), 2018թ. հուլիսին վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում կատարվել են փոփոխություններ, և որպես վերահսկվող եկամուտների գծով առանձին պարտավորություն է դիտարկվել նաև դրոշմանիշների վճարը՝ առանձին տողի ձևով: Պետք է նշել, որ վկայակոչված հրամանը հասանելի չէ, այն հրապարակված չէ, և «Արֆարմացիա» ՓԲԸ-ն չէր կարող տեղյակ լինել, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը այսուհետ դիտարկվել է որպես վերահսկվող եկամուտների գծով առանձին պարտավորություն, և Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնելով և հավաստելով, որ բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, նման պայմաններում, մեր կարծիքով, չի խախտել գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն:

Հարկ է նշել, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /25.04.2019թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը

«Արֆարմացիա» ՓԲԸ-ին թյուրիմացության մեջ է գցել նաև այն հանգամանքը, որ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները դիտարկվել են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջություն, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին: Միևնույն ժամանակ ՀՀ հարկային օրենսգիրքը անդրադառնալով հարկերի և տուրքերի համակարգին, օրենսգրքի 7-րդ հոդվածում սպառիչ թվարկել է ՀՀ-ում կիրառվող վճարների բոլոր տեսակները, որոնց շարքում բացակայում է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը, և վերոհիշյալ տրամաբանությամբ, ըստ Ընկերության, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշների վճարը չպետք է դիտարկվեր հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթներում արդեն իսկ քննվել են դրոշմանիշային վճարների վերաբերյալ տասնյակ բողոքներ և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգեր, որոնց քննության ընթացքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք դրոշմանիշների վճարը, որպես ժամկետանց հարկային պարտավորություն չեն դիտարկել, քանի որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում որպես հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ և առկա է Ընկերությունների կողմից իրազեկված չլինելու հանգամանքը:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական և իրավական հիմնավորումները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով՝ Ընկերությունը խնդրել է բողոքը բավարարել:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.05.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 14.05.2019թ. թիվ 01/552-19 գրությամբ ներկայացրել է բողոքի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.05.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 23.04.2019թ. մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 4-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 03.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Արֆարմացիա» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 24 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 10.05.2019թ. ներկայացված բողոքը (ի լրումն բողոքի ներկայացված գրություն)՝ կից փաստաթղթերով, «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն

կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: ***<u>Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:</u>*** Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 23.04.2019թ. մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

Ընկերության հայտի թիվ 5 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի համար կազմել է 2 520 ՀՀ դրամ, 10-րդ չափաբաժնի համար՝ 62 600 ՀՀ դրամ, 14-րդ չափաբաժնի համար՝ 18 608 ՀՀ դրամ, 15-րդ չափաբաժնի համար՝ 5 200 ՀՀ դրամ և 17-րդ չափաբաժնի համար՝ 3 420 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի վերոհիշյալ չափաբաժինների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ

կետի հիման վրա 03.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Արֆարմացիա» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 24 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն, մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած ***<u>հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:</u>***

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է իրականությանը չհամապատասխանող, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ և առաջնորդվել Կարգի 44-րդ կետի պահանջներով, քանի որ նշված կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված կարգով տրամադրված

եզրակացությունը՝ Ընկերության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ արձանագրված պարտավորությունը հանդիսացել է դրոշմանիշային վճար, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ տեսանելի չի եղել Ընկերության անձնական քարտի քաղվածքում և Ընկերությունը տեղեկացված չի եղել նշված պարտավորության վերաբերյալ, ապա հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հանդիսանում է հարկային եկամուտ և հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 10.05.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**